ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՈՒ ԺՈՂՈՎՆԵՐԸ

1941 թ. մարտի 17-ին և 18-ին տեղի ունեցան ակադեմիայի հինգ բաժանմունքների ժողովները։

Տիեզերական տարածությունների, երկրի ընդերքի, մաթեմատիկայի, քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանական գիտությունների բնագավառներում կոմպլեքս հետազոտություններ կատարող գիտնականները, հանրագումարի բերելով իրենց կատարած աշխատանքի արդյունքները, միահամուռ կերպով նշեցին այն նոր, համընդհանուր հանաչում գտած ավանդները, որ Հայաստանի գիտնականները ներդրել են բնական գիտությունների գանձարանում։

Զգալի հաջողություններ են ձեռք բերել նաև հասարակական գիտությունների բաժանմունքի ինստիտուտներում ու սեկտորներում աշխատող գիտնականները։ Այդ մասին զեկուցեց ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Ս. Պ. Ելյանը։

Հաշվետու տարին զուգադիպեց երկու մեծ հոբելյանների. սովետական ժողովուրդը և աշխարհի առաջավոր մարդկությունը նշեցին մեր կուսակցության և սովետական պետության հիմնադիր, միջազգային բանվորական շարժման մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինի ծննդյան հարյուրամյակը, որին հաջորդեց Հայաստանում սովետական կարգերի հաստատման և Հայաստանի կոմունիստական կուսակցության հիմնադրման հիսունամյա հոբելյանը։

Հայաստանի գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի ինստիտուտներում և սեկտորներում աշխատող գիտնականները նոր խոսք ասող գիտահետազոտական աշխատանքներով դիմավորեցին համաժողովրդական տոնի վերածված հոբելյանները։ Հայ ժողովրդի պատմության բազմահատորյակի լույս տեսած 7-րդ և 8-րդ հատորները, որոնք ընդգրկում են Հայաստանում սովետական կարգերի հաստատման և սոցիալիստական ու կոմունիստական շինարարության ժամանակաշրջանների ամբողջական պատմությունը, լավ նվեր են Սովետական Հայաստանի հիսունամյա հոբելյանին։

Զեկուցողը հաղորդեց, որ հասարակական գիտությունների բաժանմունքի ինստիտուտներում և սեկտորներում անցյալ տարի մշակվել են բազմաթիվ պրոբլեմներ՝ 365 թեմաներով։

Տնտեսագիտության ինստիտուտը ավարտել է տանրապետության հանրային արտադրության կառուցվածքի և արդյունավետության բարձրացման ու կատարելագործման պրոբլեմին նվիրված մի շարք թեմաներ։

Պատմության ինստիտուտի կարևորագույն խնդիրներից է հայ ժողովրդի պատմության բազմահատորյակի ստեղծումը։ Պատմաբանները կարևոր ուսումնասիրություններ են հրատարակել՝ նվիրված կապիտալիստական հասարակարգի ծագման, սոցիալիստական ու կոմունիստական շինարարության, Հայաստանի բանվորների ու գյուղացիների հեղափոխական շարժումների, հայկական գաղթօջախների, ինչպես նաև Հայաստանի հնագույն շրջանի պատմության հարցերին։ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի աշխատանքներն ընթացել են ժամանակակից հայ գրականության զարգացման օրինաչափությունների հետազոտման ուղղությամբ, հրատարակվել են մի շարք արժեքավոր գրքեր ու մենագրություններ՝ նվիրված հայ գրականության մեջ սոցիալիստական ռեալիզմի ձևավորման, պոեզիայի զարգացման, գրականության կուսակցականության լենինյան ուսմունքի և գրական կապերի հարցերին։ Ինստիտուտը լույս է ընծայել Մ. Աբեղյանի երկերի չորրորդ հատորը։ Հրատարակության է պատրաստել Հակոբ Պարոնյանի երկերի 10-րդ հատորը, Ջարենցի անտիպ ժառանգությունը և այլն։

Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը հաշվետու տարում առանձնակի ուշադրություն է դարձրել կոլեկտիվ կերպով մշակվող թեմաների կատարմանը, կարևոր աշխատանք է կատարել ժամանակակից հայերենի հոմանիշների ուսումնասիրության ուղղությամբ, փորձառական հետազոտություններ է կատարել բարբառագիտության բնագավառում, հրատարակել է մի շարք արժեքավոր բառարաններ։

Ընթացիկ տարում կազմակերպվեց փիլիսո-

փայության և իրավունքի ինստիտուտը, որի հիմնական խնդիրներն են ժամանակակից փիլիսոփայության մեջ իմացաբանության տարբեր հասկացությունների մեկնաբանումը, բուրժուական իդեալիստական զանազան կոնցեպցիաների մարքսիստական քննադատությունը, ինչպես նաև հայ փիլիսոփայական մտքի պատմության ուսումնասիրությունը։ Ինստիտուտը տպագրության է հանձնել 14 անուն աշխատություն, այդ թվում գեղագիտության հարցերին նվիրված արժեքավոր ժողովածուն։

Այնուհետև զեկուցողը հանգամանորեն անդրադարձավ հնագիտության և ազգագրության, արվեստի ինստիտուտների, արևելագիտության սեկտորի ընթացիկ տարում կատարած աշխատանքի արդյունքների ամփոփմանը։ Հնագիտության և ազգագրության ինստիտուտը կազմակերպել է նոր գիտարշավներ ազգագրական և բանահյուսական նյութեր հավաքելու համար, հրատարակել է «Վանի հարսանիքը» խորագիրը կրող գիրքը, «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարի առաջին հատորը, «Հայաստանի հնագիտական հուշարձաններիս 4-րդ և 5-րդ հատորները, ինչպես նաև ընթացիկ տարում կատարված պեղումների արդյունքներն ամփոփող հաշվետվություններ։

Արվեստի ինստիտուտը հայ երաժշտության, ճարտարապետության, կերպարվեստի, թատրոնի և եղբայրական ժողովուրդների հետ հայ ժողովրդի մշակութային կապերի հարցերի վերաբերյալ հրատարակել է 10 անուն աշխատություն։

Բեղուն է եղել արևելագիտության սեկտորի գործունեությունը։ Սեկտորն անցյալ տարի հրատարակել է հետազոտություններ՝ նվիրված Իրանի, Թուրքիայի, արաբական երկրների անցյալին ու ներկային։

Զեկուցողը նշեց, որ ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի հինգ տարիների գործունեությունն ընթացել է կուսակցության XXIII համագումարի նշած ուղիներով, ՍՄԿԿ Կենտկոմի 1967 թ. մարտի 14-ի «Հասարակական գիտությունների հետագա զարգացման և կոմունիստական կուսակցության շինարարության մեջ նրանց դերի բարձրացման մասին» որոշման իրականացման նշանակությամբ։

Զեկուցման շուրջ բացված մտքերի փոխանակությանը մասնակցեցին ընկ. ընկ. Ա. Հովհաննիսյանը, Ս. Սրեմյանը, Է. Աղայանը, Դ. Սնակը, Խ. Իարսեղյանը, Ռ. Առաքելյանը։

* * *

Տեղի ունեցան Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի իսկական անդամների (ակադեմիկոսների) և թղթակից-անդամների ընտրություններ։ Հասարակական գիտությունների բաժանմունքի զծով ընտրվեցին հետևյալ իսկական անդամները. Ղարիբջանյան Գևորգ Բագրատի (նոր և նորագույն պատմություն), Խաչիկյան Լևոն Ստեփանի (հին և միջին դարերի պատմություն), Սնակ (Գրիգորյան) Գուրգեն Գրիգորի (լեզվաբանություն)։ Թղթակից-անդամներ ընտրվեցին. Գալոյան Գալուստ Անուշավանի (նոր և նորագույն պատմություն), Նալբանդյան Վաչե Սմբատի (գրականագիտություն), Բրուտյան Գևորգ Աբելի (փիլիսոփայություն)։

* * *

Մարտի 19-ին տեղի ունեցավ Հայաստանի գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը, որը ներածական խոսքով բաց արեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանը։ Ժողովը լսեց և քննարկեց ակադեմիայի ակադեմիկոս-քարտուղար Դ. Ս. Դավթյանի զեկուցումը՝ ակադեմիայի 1970 թ. գիտական գործունեության արդյունքների մասին։

Ընդհանուր ժողովը քննարկեց նաև կազմակերպչական հարցեր։ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ ընտրվեց Վ. Հ. Համբարձումյանը, փիցե-պրեզիդենտներ ընտրվեցին ակադեմիկոսներ Ս. Ն. Մերգելյանը, Ա. Ռ. Հովհաննիսյանը, Ա. Գ. Իոսիֆյանը։

Ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցում էին ընկ. ընկ. Ա. Ս. Քոչինյանը, Ն. Ա. Հարությունյանը, Գ. Ա. Տեր-Ղազարյանցը, Ռ. Հ. Խաչատրյանը, Մ. Ս. Մելքոնյանը, Լ. Պ. Ղարիբջանյանը, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահի տեղակալ Լ. Ա. Ստեփանյանը, ՀԿԿ Կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչ Ջ. Ս. Կիրակոսյանը։

Հ. ԱՐԱՍՏԱՆ